ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԱԳՆԱՊԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԽՏԱՆԻՇ

ԱՐՄԱՆ ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆ

Արդի քաղաքակրթությունը ընձեռում է ճանաչողության և գործունեության անսահման հնարավորություններ: Գիտատեխնիկական առաջընթացը էականորեն ազդել է մարդու կենսակերպի վրա՝ տրամադրելով նրան իր և ուրիշների գործունեությունը վերահսկելու նոր միջոցներ ու գործիքներ: Սակայն այդ կարողության հակառակ կողմում սկսում են առարկայանալ վախեր ու տագնապներ, որոնք ծնվում են մարդկային քաղաքակրթությանը սպառնացող վտանգների գիտակցումից: Գլոբալ հիմնախնդիրները, բնական աղետները, նորահայտ վիրուսները, ահաբեկչությունը և բնական ու մարդածին նմանատիպ այլ երևույթները սպառնալիք են դառնում հասարակության անվտանգության երաշխիքների համար: Արդի մարտահրավերների, հոգևոր ճգնաժամի, սոցիալական կյանքի անկանխատեսելի փոխակերպումների, ավանդական արժեհամակարգի վիճարկման և մշակույթի զանգվածայնացման հարուցած տագնապները աստիճանաբար ներթափանցում են կյանքի այլ ոլորտներ և դառնում համահասարակական երևույթ: Ընդ որում՝ ժամանակակից մարդուն բնորոշ այդ տագնապները կապված են ոչ միայն վտանգավոր իրավիճակների, այլև տագնապի՝ իր իսկ ներսում թաքնված խորքային աղբյուրների հետ: Վերջիններիս թվին կարող ենք դասել ներքին ճնշվածությունը, օտարումը, անվստահությունը, ուղղվածության կորուստը, որ վերապրում է ժամանակակից հակասական արժեքներին և վարքի չափորոշիչներին բախվող մարդը: Այս առնչությամբ Է. Գիդդենսը նկատում է, որ արդի հասարակությունը մարդուն չի տալիս պաշտպանվածության ոչ մի երաշխիք: Կենսակերպը, որը մենք վարում ենք, լի է տագնապներով և անվստահությամբ: «Պարադոքսն այն է, որ մեր նախնիների համեմատ մենք օգտվում ենք ավելի շատ ազատություններից և կյանքի վերահսկողության միջոցներից, սակայն արդյունքում մենք ավելի անվստահ ենք և չգիտենք՝ ինչպես վարվել այն դեպքերում, երբ մեր նախնիները վարվում էին «ինչպես պետք է»»[1]:

Ժամանակակից կյանքին բնորոշ լարվածությունը, անորոշությունն ու անկանխատեսելիությունը մարդուն թույլ չեն տալիս իրեն

[1] **Уэбстер Ф.** Теории информационного общества. М., 2004. с. 281.

անվտանգ զգալ: Ասվածի ցայտուն օրինակ կարող է ծառայել վերջին շրջանի ֆինանսատնտեսական ճգնաժամը, որը, ընդգրկելով ողջ համաշխարհային տնտեսության գրեթե բոլոր ոլորտները, կասկածի տակ դրեց ժամանակակից հասարակության սպառողական իդեալները: Տևական սթրեսները դարձել են արդի դարաշրջանի առանձնահատկությունը, իսկ տագնապայնությունը վերածվել է մշակութային երևույթի: Հատկանշական փաստ է, որ ժամանակակից աշխարհում յուրաքանչյուր վեցերորդ մարդն իր կյանքի այս կամ այն փուլում տառապում է նյարդային խնդիրներից, և ինչպես կանխատեսում է Առողջապահության միջազգային կազմակերպությունը՝ արդեն 2020-ական թվականներին հոգեկան առողջության խանգարումները կդառնան հաշմանդամության և մահացության հիմնական պատճառներից մեկը[2]: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ հասարակագիտական արդի հետազոտություններում ավելի մեծ ուշադրություն է դարձվում կյանքի հուզական տարրերին, քանի որ հաճախ հենց դրանք են հնարավորություն տալիս բացատրելու սոցիալական գործընթացների մեխանիզմները, իրականացնելու հասարակության զարգացման հարաբերական կանխատեսումները: Այդ հետազոտություններում կարևոր նշանակություն է ձեռք բերում ոչ այնքան առանձին անհատների կամ փոքր խմբերի, որքան ողջ հասարակության հուզական կառույցի ուսումնասիրությունը: Այս տեսակետից խիստ ուշագրավ է, որ ավանդաբար հոգեբանական ուսումնասիրությունների թիրախ հանդիսացող տագնապի հիմնախնդիրը այսօր արդեն դարձել է նաև սոցիալ-փիլիսոփայական հետազոտությունների առարկա:

Հոդվածում քննարկվող հիմնախնդրի համատեքստում կարևոր է հստակեցնել և տարբերակել «տագնապ» և «վախ» հասկացությունները:

Վախը հուզական ռեակցիա է, որն առաջանում է ֆիզիկական որոշակի սպառնալիքի առկայության դեպքում՝ հարուցելով կյանքի և առողջության նկատմամբ իրական վտանգի զգացողություն: Այսինքն՝ վախն ունի հուզական վառ երանգներ և վտանգի վերացման հետ մեկտեղ՝ նրա հախուռն դրսևորումն անմիջապես անհետանում է: Վախը մոբիլիզացնում է մարդկային օրգանիզմի բոլոր հասանելի ռեսուրսները: Ընդ որում՝ քիչ թե շատ ուժեղ վախի զգացումը այնքան ինտենսիվ է, որ անհնար է այն զգալ երկար ժամանակ. վրա է հասնում մաշվածությունը, և վախին փոխարինելու է գալիս անտարբերությունը կամ դատապարտվածությունը:

Տագնապը, ընդունված ըմբռնման համաձայն, մարդուն բնորոշ այնպիսի հուզական վիճակ է, որը ժամանակային առումով շատ ավելի տևական բնույթ ունի, ուղեկցվում է անորոշ վտանգի զգացումով, ըստ այդմ՝ դասվում է վատ գիտակցվող, «մշուշապատ» զգացումների շարքին: Տագնապի երկարատև ապրումը հանգեցնում է ֆիզիկական և հո-

[2] Տե՛ս **William Davies**, The happiness industry. London: Verso, 2015, էջ 10:

գեբանական ուժերի քայքայման ու բարոյալքման: Այս զգացողության շարժառիթ կարող են լինել կյանքի անկայունությունը, իրադարձությունների առօրյա ընթացքի խախտումները, անսպասելի ծագած խնդիրները և այլն: Երբ այս երևույթները դառնում են պարբերական, տագնապները վերածվում են մշտական կենսական ապրումների, որոնք նաև թույլ չեն տալիս ճիշտ կողմնորոշվել սահմանային իրավիճակներում ու դրսևորել համարժեք վարք և ընտրություն: Նման «անսովոր» վարքի պատճառներից մեկն այն է, որ տագնապային իրավիճակներում բացակայում կամ ուշադրությունից սպրդում է այն օբյեկտը, որի վրա պետք է կենտրոնանար տագնապի մեջ հայտնված մարդը: Բանն այն է, որ հուզական այդպիսի վիճակներում կարևորվում է ոչ թե վտանգի աղբյուրը, որը հաճախ թվացյալ է, կամ, ինչպես Թիլլիխը կասեր՝ «ոչինչն»[3] է, այլ հենց ինքը՝ վտանգը:

Տագնապների ու վախերի հոգեբանական դրսևորումների վերլուծության հարցում մեծ է հատկապես Զ. Ֆրոյդի ներդրումը: Նա առանձնացնում է վախերի երկու տեսակ՝ Angst, որը առնչվում է ինչ-ինչ իրավիճակների և չունի շարժառիթ-օբյեկտ, և Furcht, որի շարժառիթը կոնկրետ օբյեկտ է: Ըստ Ֆրոյդի՝ վախը և տագնապը մարդու հոգեկան կյանքի կարևոր բաղադրատարրերն են, քանի որ դրանք ուղղակիորեն կապված են ընտրություն կատարող և պատասխանատվություն կրող անհատ դառնալու գործընթացի հետ: Այսինքն՝ հոգեբանական հասունությունը միշտ ենթադրում է տագնապի որոշակի աստիճան: Եթե վախի ապրումն ուղղված է մարդու ֆիզիկական «ես»-ի պահպանմանը, ապա տագնապի զգացումը կոչված է պահպանելու անձի՝ որպես սոցիումի անդամի անվտանգությունը: Տագնապն ամենից առաջ դրսևորվում է ինքնագնահատականի խորտակման վտանգի ժամանակ: Առավելապես կենտրոնանալով անձի հոգեկան գործընթացների և ներքին կոնֆլիկտների վրա՝ Ֆրոյդն առանձնացնում էր տագնապի երեք դրսևորումներ՝ նորմալ (արտաքին աշխարհի ազդեցություններ), նևրոտիկ (Իդ-ի ազդեցություններով) և բարոյական (գեր-Ես-ի ազդեցություններ):

Տագնապի մասին ֆրոյդյան պատկերացումները հետագա զարգացում ստացան մասնավորապես Կ. Հորնիի աշխատանքներում, ով հոգեբանություն ներմուծեց վախի և տագնապի նոր ըմբռնումներ: Այսպես, նա առաջ քաշեց «բազային» տագնապի գաղափարը, ըստ որի՝ մարդը տագնապներ է ապրում այն պատճառով, որ ունի սեփական աննշանության, անօգնականության, լքվածության զգացում և գտնվում է այնպիսի աշխարհում, որը բաց է վիրավորանքի, խաբեության, դավաճանության, նախանձի համար: Այս իրավիճակում մարդն ապրում է մեկուսացման, թշնամանքի և անօգնականության զգացումներ[4]: «Բա-

[3] Տե՛ս **Тиллих П.** Избранное. М., 1995, էջ 26:

[4] Տե՛ս **Хорни К.** Невроз и личностный рост. Борьба за самоосуществление. Киев, 2006, էջ 8:

զային» տագնապը ներհատուկ է ցանկացած մարդու և դարձել է ժամանակակից մշակույթին բնորոշ երևույթ: Պատահական չէ, որ Հորնին մեր ժամանակների մարդուն բնորոշում է որպես «նևրոտիկ անձնավորություն»: Տագնապային և նևրոտիկ վիճակները խթանող գործոնների շարքում նա առանձնացնում է մրցակցությունն ու ատելությունը, որոնք մարդու ներսում կոնֆլիկտի մեջ են մտնում սիրո և մարդկայնության հետ: Այս շարքում են նաև պահանջմունքների և ազատության դրսևորումների ու դրանց սահմանափակումների միջև եղած հակասությունները:

Շարունակելով տագնապի սոցիոմշակութային հիմունքների վերլուծությունը՝ Ռ. Մեյը հիմնախնդիրը անմիջականորեն կապում է այն իրողության հետ, որ արևմտյան մարդն այսօր մշտապես տագնապի մեջ է իր կյանքի՝ «հաջողության» մշակութային նորմերին համապատասխանության համար[5]: «Հաջողության» մշակույթը վերածվել է ինքնիրացման այնպիսի հրամայականի, ինչպիսին միջնադարյան մարդու համար փրկության գաղափարն էր: Այլ կերպ ասած՝ ժամանակակից մարդը ճնշվում է ոչ այնքան հասարակական խրախուսում չստանալուց, որքան ինքն իր հանդեպ խորշանքի, անլիարժեքության և անհուսության զգացումներից: Արդի մշակույթում մրցակցության մեջ հաջողության հասնելու կարևորությունը այնքան մեծ է, իսկ հնարավոր «ձախողման» տագնապը՝ այնքան բարձր, որ սոցիալական մրցակցության մեջ հաջողության հասնելը վերածվում է մշակութային գերակա արժեքի: Մարդը հաջողակ է, ուրեմն՝ արժեքավոր է, եթե ոչ, ուրեմն ունի ցածր արժեք:

Ընդ որում՝ ժամանակակից մարդը միաժամանակ և՛ «վաճառող» է, և՛ «վաճառքի դրված ապրանք», և նրա ինքնահարգանքը շատ դեպքերում կախված է այնպիսի գործոններից, որոնք դուրս են նրա իրավասության շրջանակներից: Այս գործոնները վտանգում են մարդու պաշտպանվածության զգացումը, քանի որ նրա արժեքը նախևառաջ որոշվում է ոչ թե մարդկային որակներով, այլ շուկայում ունեցած հաջողությամբ: Բանն այն է, որ մշտապես մրցակցային ու փոփոխվող շուկայում նրա ինքնահարգանքը ևս դառնում է փոփոխական, և նա ստիպված է ուրիշներից անընդհատ պահանջել իր կարևորության հաստատում: Հենց նման իրավիճակներում մարդն անընդհատ ձգտում է «հաջողության», որովհետև այն ինքնագնահատականի բարձրացման և տագնապի նվազեցման էական գործոն է, մինչդեռ ձախողումը սպառնում է խաթարել ինքնահարգանքի այն հիմնական համակարգը, որն ունի ժամանակակից մարդը: Ակնհայտ փաստ է, որ մրցակցային հարաբերություններում անհաջողության ամեն մի դրսևորում հարուցում է անօգնականության և թերարժեքության ուժեղ զգացում: Այսպես կոչված

[5] Տե՛ս **Мэй Р.** Смысл тревоги. М., 2001, էջ 144:

մրցակցության ձգտումը առաջացնում է արատավոր մի շրջան, որտեղ տագնապի զգացումը սնվում է ինքն իրենից:

Մրցակցությունը հաջողության հասնելու կարևոր նախապայմաններից է, քանի որ այն ակտիվացնում է մարդու ինքնահաստատման պահանջմունքը: Նկատենք, որ նման դեպքերում մշակութային համակարգը չի բացառում որոշակի չափաբաժնով ագրեսիվության և թշնամանքի դրսևորումները, որոնք իրենց հերթին նպաստում են օտարման, անհանդուրժողականության, անհաշտակեցության ու տագնապների դրսևորումներին: Արդյունքում ստացվում է հետևյալ շրջապտույտը. մրցակցության ձգտում – թշնամական զգացմունքներ – օտարում – տագնապ – մրցակցության ուժեղացում: Ինչպես տագնապի հաղթահարման ամեն մի նման ձգտում է՛լ ավելի է ուժեղացնում տագնապը, այնպես էլ հաջողության հասնելու ամեն մի ձգտում է՛լ ավելի է խթանում նոր հաջողությունների հասնելու ներքին պահանջը:

Այսպիսով, ժամանակակից անհատակենտրոն հասարակության մեջ հեղինակավոր դիրք զբաղեցնելը դարձել է գերնպատակ, ինչն էլ, իր հերթին, էլ ավելի է սրում մրցակցությունը՝ հարուցելով սոցիոմշակութային այնպիսի անցանկալի հետևանքներ, ինչպիսիք են միայնությունը, օտարումը, թշնամական փոխհարաբերությունները և այլն:

Այս համատեքստում հատկանշական է վերջերս Մեծ Բրիտանիայում տեղի ունեցած աննախադեպ իրադարձությունը, երբ երկրի վարչապետը պաշտոնապես հայտարարեց «միայնության նախարարի» նոր հաստիք ներդնելու մասին: Պատճառն այն է, որ հետազոտությունները ցույց են տալիս, որ Մեծ Բրիտանայի բնակչության մի զգալի հատվածը հաճախ կամ մշտապես տառապում է միայնության զգացումից: Այս իրադարձության առնչությամբ բրիտանական հեղինակավոր «The Guardian» պարբերականը նկատում է, որ միայնությունն այսօր վերածվել է կենսակերպի, դարձել է մարդկային համակեցությունը ներսից կազմալուծող համաճարակ, և «մենք կամաց-կամաց կորցնում ենք իրար հետ և իրականության հետ մեր կապերը: Կարելի է առանձնացնել մի շարք հիվանդածին գործոններ՝ հանրույթի կազմալուծում, քաղաքացիների վերածում սպառողների, նախանձի մշակույթ: Միայնությունը ոչնչացնում է իրական սոցիալականությունը՝ փոխարկելով այն վիրտուալ իրականության»[6]:

Ակնհայտ է, որ երբ միայնության զգացումը խախտում է ինչ-որ սահման, այն անխուսափելիորեն ծնում է տագնապ՝ իր բոլոր բացասական հետևանքներով: Այս տեսանկյունից հասարակական տագնապները կարելի է դիտարկել որպես հասարակության հոգևոր կյանքի խեղման դրսևորում, քանի որ օտարումը մարդկանց՝ միմյանց հետ

[6] **Stewart Dakers**, The minister for loneliness will need all the friends she can get. https://www.theguardian.com/society/2018/jan/23/tracey-crouch-minister-loneliness-friends-powerful-vested-interests 29.03.2018

ունեցած էկզիստենցիալ կապերի խզման հետևանքով ձևավորված կենսավիճակ է, մարդկային համակեցության և փոխհարաբերությունների «խտության» կորստի վկայություն: Այս իմաստով օտարումը նույնական է հոգեֆիզիոլոգիական (Ֆրոյդ) և սոցիոմշակութային (Շտոմպկա) ցնցմանը: Խնդիրն այն է, որ մերձավորների հետ կապի խզումը էկզիստենցիալ ցնցման մի ձև է, որն ուղեկցվում է վախով ու տագնապով առ մարդուն անհայտ, թշնամական և դիմակայող իրականություն, այլ կերպ՝ առ սոցիոմշակութային մի կենսաշխարհ, որտեղ կարող է տարրալուծվել մարդու ինքնությունը: Մանավանդ որ արդի քաղաքակրթությանը բնորոշ մարդաբանության նոր արժեհամակարգում անձը հավերժական ճամփորդ է, տիեզերական թափառաշրջիկ, տիպօրինական է դառնում դեռևս չիրացված, չնույնականացված, «առանց հատկությունների» (Թ. Մուզիլ) մարդը[7]:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ սոցիալական տագնապները՝ որպես հասարակության էկզիստենցիալ ինքնազգացողության բաղադրատարր, արտացոլում են հասարակական կյանքի ներկա վիճակը, այսինքն՝ այն ազդեցությունները, որոնք մարդկային կենսագործունեության օբյեկտիվ պայմանների փոփոխությունները թողնում են հասարակական տրամադրությունների և մարդկանց ինքնագնահատականի վրա:

Ըստ այդմ՝ սոցիալական տագնապների հիմնախնդիրը առանձնահատուկ նշանակություն ունի արդի փոխակերպվող հասարակությունների հետազոտությունների համատեքստում: Բանն այն է, որ արմատական սոցիոմշակութային փոխակերպումներ ապրող հետխորհրդային երկրներում, ուր «մրցակցային մշակույթը» դեռևս բնականոն կենսակերպ չէ, ծագում են տագնապահարույց լրացուցիչ գործոններ:

Նախկին վարչարարական համակարգի անկումը, տնտեսական կապերի և հարաբերությունների թուլացումը, նոր քաղաքական ինստիտուտների ձևավորումը, որոնք ուղեկցվում են կենսամակարդակի անկմամբ և նոր հոգևոր կողմնորոշիչների ձևավորմամբ, ապակառուցողական հետևանքներն են թողնում հասարակության լայն շրջանակների վրա՝ բացասաբար անդրադառնալով հասարակության հուզական մթնոլորտի և բնակչության ինքնազգացողության վրա և հարուցելով անօգնականության, ապակողմնորոշվածության, ցնցումի, վախի և տագնապի զգացումներ: Այլ կերպ ասած՝ համընդհանուր անորոշության, բարձր ռիսկի պայմաններում ավանդական նորմերն ու արժեքները կասկածի են ենթարկվում, կորցնում են իրենց հիմնական իմաստն ու կայունությունը: Արդի սոցիալական փոխակերպումների վտանգներին հանդիպելիս մարդը չի կարող այլևս հենվել իրեն ծանոթ մշակույթի

[7] Տե՛ս **Գ. Սողոմոնյան**, Ժամանակակից մարդաբանական ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2016, № 1, էջ 20:

հիմքերին, որովհետև այդ հիմքերն ինքնին արդեն վտանգի տակ են[8]:

Սոցիոմշակութային նման անորոշությունից բխող տագնապայնությանը նպաստող լուրջ գործոն են դառնում նաև հետխորհրդային հասարակությունների մեծ մասում առկա հուզական կաշկանդվածությունը և ճնշվածությունը, որոնց պատճառը պատմական ենթատեքստն է. մարդկանց մեծ մասը, գտնվելով կախյալ վիճակում, հնարավորություն չի ունեցել ազդելու այդ իրավիճակի վրա: Բացի այդ, վերջին տասնամյակները մարդկանց համար անընդհատ փոփոխվող խաղի կանոնների, մշտական փոխակերպումների և բարեփոխումների ժամանակաշրջան են: Նման իրավիճակում պատահական չէ հասարակության ակնհայտ ձգտումը դեպի կարգուկանոն: Օրինակ, համաձայն Հասարակական կարծիքի հետազոտության համառուսաստանյան կենտրոնի 2008 թ. հարցումների՝ ռուսների 54%-ը կողմ է արտահայտվել անվտանգությանը և կարգուկանոնին, եթե նույնիսկ դրանք կխոչընդոտեն մարդկանց ազատությունը[9]: Մոտավորապես նման արդյունքներ ունենք նաև հայաստանյան իրողությունների ուսումնասիրություններում: Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից 2008 թվականից պարբերաբար անցկացվող «Կովկասյան բարոմետր» հարցման շրջանակներում հետաքրքիր է այն հարցի պատասխանը, թե մեր քաղաքացիները ցանկանում են պետությունն ընկալել որպես ծնող, թե որպես վարձու աշխատող[10]: Արդյունքները փաստում են, որ վերջին 10 տարիների ընթացքում հասարակության մեծամասնությունը այդպես էլ չի կարողացել ձերբազատվել խորհրդային «պետական քաղաքացու» բարդույթից և ընդունել «ազատ քաղաքացու» սոցիոմշակութային դիրքորոշումները[11]: Նրանք, ովքեր նախապատվություն են տալիս «ծնող-երեխա» ուղղահայաց փոխհարաբերությանը, որտեղ ծնողը ուժեղ է, օժտված է անհամեմատ ավելի մեծ հեղինակությամբ, բայց և միաժամանակ հոգում է իր երեխայի նվազագույն պահանջմունքները, կայուն մեծամասնություն են: Մինչդեռ պետությունը քաղաքացու մակարդակին իջեցնող և հորիզոնական «աշխատող-աշխատող» փոխհարաբերությանը (որտեղ պետությունը և քաղաքացին կիսում են հավասար պատասխանատվություններ և իրավունքներ) նախապատվություն տվողների թիվը վերջին տարիներին նույնիսկ նվազման միտում ունի:

---

[8] Տե՛ս **Баринов Д.** Социальные тревоги. Понятие, природа, роль в жизни общества. М., 2010, էջ 142:

[9] Տե՛ս **Седова Н.** Современное российское общество: между тревогой и оптимизмом. // «Мониторинг общественного мнения», № 6 (94), ноябрь-декабрь 2009, էջ 166:

[10] Տե՛ս «Կովկասյան բարոմետր (ԿԲ) 2017», էջ 29: http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2017/CB2017_ARM_presentation_final.pdf 29.03.2018

[11] Տե՛ս **Է. Հարությունյան**, Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., 2000, էջ 184:



Այս վիճակագրության հնարավոր բացատրություններից մեկն էլ այն է, որ հետխորհրդային հասարակությունների՝ իրենց վերջնանպատակին չհասած բարեփոխումների, սոցիալական և քաղաքական նորարարությունների ոչ համարժեք ծրագրումը և իրականացումը ծնում են նոր վախեր և տագնապներ: Նոր պայմաններին համապատասխան կերպով հարմարվելու ճանապարհների և մեխանիզմների փնտրտուքը իր տեղը զիջում է ապագայի հանդեպ անհանգստության պասիվ զգացողությանը: Այս պատճառով էլ փոփոխությունների և նորարարության հանդեպ վախերն ու տագնապները հաճախ դառնում են սոցիոմշակութային և քաղաքական պահպանողականության աղբյուրներ:

Սոցիալական տագնապների կառուցվածքը և արդի դինամիկան գտնվում են այնպիսի գործոնների ազդեցության ներքո, որոնք բնութագրում են արդի հետխորհրդային փոխակերպումների սոցիոմշակութային առանձնահատկությունները: Այդպիսի գործոնների շարքում կարելի է առանձնացնել օբյեկտիվ տնտեսական վիճակը, որը սահմանափակում է բնակչության զգալի մասի նյութական խնդիրները ինքնուրույն լուծելու հնարավորությունները, հայ ազգի հասարակական հոգեբանության այն առանձնահատկությունները, որոնք ճգնաժամի պայմաններում ակտիվացնում են «անհատական գոյատևման» կենսափիլիսոփայության դրսևորումները և համընդհանուր առևտրայնացման պայմաններում կտրուկ սահմանափակում հոգևոր պահանջմունքները, առօրյա հոգսով ապրելու տրամաբանությունը և երկարաժամկետ նպատակադիր գործունեություն ծավալելու ցածր մոտիվացիան: Նման իրավիճակում հետխորհրդային հասարակությունները դառնում են մերտոնյան դասական անոմիայի պատանդները. հասարակությունում առաջնայնություն են ստանում նյութական արժեքները, սակայն բացակայում են այդ արժեքներին հասնելու հանրորեն ընդունված օրինական և արդյունավետ միջոցները: Պատահական չէ, որ Հայաստանում լավ աշխատանք գտնելու հարցում կրթության և մասնագիտական կարողությունների վրա է հույս դնում ազգաբնակչության

ընդամենը մոտ 1/3-ը[12]: Ինչպես դիպուկ նկատում է Պանարինը, հետխորհրդային հասարակություններում «հավակնությունների հեղափոխությունը» այդպես էլ չի զուգորդվում «հնարավորությունների հեղափոխությամբ»[13]:

Նույն հարցման շրջանակներում Հայաստանում հարցվածների 53 տոկոսը երկրի թիվ մեկ հիմնախնդիր է համարել գործազրկությունը և աղքատությունը, ընդ որում՝ կարևոր է նշել, որ առնվազն վերջին 5 տարիներին ԱՊՀ երկրների շարքում մեր հանրապետությունը գործազրկության ամենաբարձր մակարդակ ունեցող երկիրն է[14]: Այս համատեքստում կարևոր է հիշել Կ. Մանհեյմի այն միտքը, որ գործազրկության մեջ հայտնված մարդուն գոյատևման միջոցների ժամանակավոր կորուստը չէ միայն, որ անհանգստացնում է: Երկարատև գործազրկությունը, բացի սոցիալ-տնտեսական ոլորտից, ապակառուցողաբար է ազդում նաև հասարակության մշակութային շերտերի վրա և իռացիոնալացնում հասարակական հարաբերությունները: Վերջինիս առավել բացասական ազդեցությունը խաթարում է այսպես կոչված «կյանքի պլանի» ռացիոնալ կառուցվածքը[15]: Խուճապը հասնում է բարձրագույն աստիճանի, երբ մարդը հասկանում է, որ նման վտանգի զգացողությունը առնչվում է ոչ միայն իրեն, այլև շատերին, և գիտի, որ չկա այնպիսի սոցիալական հեղինակություն, որը կարող է տվյալ իրավիճակում առաջարկել գործունեության հուսալի կանոնների ամբողջություն և առաջնորդել իր վարքը: Նման իրավիճակներում հասարակությունը ապրում է ոչ թե անհանգստության կարճատև ժամանակաշրջան, այլ իր կառուցվածքի արմատական փոփոխություն:

Այսպիսով, վերոնշյալ բոլոր գործոնների առկայությունը, գումարած Արցախյան «սառեցված» հակամարտությունը ցանկացած պահի վերսկսելու հնարավորությունը ուժեղացնում են վախերի և տագնապների դերը և առաջին պլան են մղում կայունության, երաշխավորված նվազագույն բարիքների ապահովման արժեքները՝ միաժամանակ մեծացնելով սեփական վիճակի հնարավոր վատթարացման տագնապները՝ ինչն իր հերթին կտրուկ սահմանափակում է մարդու սոցիալական ակտիվությունը:

Այս առումով հասարակության մեջ առկա տագնապի բարձր աստիճանը ամենևին չի նպաստում երկրի ժողովրդավարացմանը, սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը և հասարակության անդամների ինքնավարության և քաղաքացիական ինքնագիտակցության ձևավորմանը: Ընդհակառակը, ինչպես փաստում է պատմությու-

---

[12] Տե՛ս «Կովկասյան բարոմետր (ԿԲ) 2017», էջ 38:

[13] Տե՛ս «Философия истории». М., 2001, էջ 95-96:

[14] Տե՛ս «Հայաստանում գործազրկության ցուցանիշը ամենաբարձրն է ԱՊՀ-ում»: http://ampop.am/unemployment-in-armenia/ 29.03.2018

[15] Տե՛ս **Манхейм К.** Диагноз нашего времени. М., 1994, էջ 402:

նը, տագնապի մեծացումը մշտապես եղել է բռնապետությունների ամենակարևոր գործիքներից մեկը: Այսօր էլ տագնապը, որպես վարքի ուղղորդման գործիք, օգտագործվում է բռնապետական ոճով կառավարվող ամենատարբեր մակարդակի համակարգերում (հասարակություն, աշխատանքային հարաբերություններ, ընտանիք և այլն)[16]: Տագնապի էությունը վտանգավոր իրավիճակները ակտիվորեն կառավարելու անընդունակությունն է: Հասարակությունը նման դեպքերում իր հուզական ոլորտը պաշտպանում է վախից կամ իր տագնապները մեղմում է դիցաբանական կամ գաղափարախոսական կառույցներով: Ամբողջատիրությունը այս առումով կարելի է համարել մշակույթի նևրոտիկ ախտանիշ, որի միջոցով նվազում են միայնակ, օտարված մարդու անօգնականության և անզորության զգացումից ծնվող տագնապները: Ամբողջատիրությունը մարդկային իրական փոխհարաբերությունները փոխարկում է անդեմ կոլեկտիվիզմի: Այսպես է, օրինակ, բնութագրվում գերմանական հասարակության հոգեվիճակը նացիստական գաղափարախոսության հաստատումից առաջ: «Նախ և առաջ զգացվում էր վախ կամ ավելի կոնկրետ՝ ինչ-որ անորոշ տագնապ: Կորսված էր տնտեսական և քաղաքական կայունությունը, բացի այդ՝ մարդիկ չէին կարողանում պաշտպանություն գտնել մշակույթի կամ կրոնի մեջ, կար ինչ-որ աղետի մշտական սպասում, բոլորի մեջ առաջացել էր հուսալի հենարանների և անվտանգության ուժեղ ձգտում: Ազատությունը, որն իր հետ բերում է վախ և տագնապ, կորցրել էր իր գրավչությունը: Ավելի լավ է ունենալ ուժեղ իշխանություն, քան ազատություն և վախ»[17]: Ըստ այդմ՝ ֆաշիզմը համեմատում են այն բանտախցի հետ, ուր մարդ ստանում է գոնե որոշակի պաշտպանվածություն, տանիք և ամենօրյա սնունդ: Մոտավորապես նման կերպ է բնութագրվում նաև կոմունիզմը, որը լցրեց պաշտոնական կրոնի նշանակության կորստից հետո առաջացած «հավատի վակուումը» և մարդկանց տվեց նպատակներ, որոնց ձգտումը կձերբազատեր տագնապներից և կասկածներից:

Նման ժամանակաշրջաններում ավտորիտար իշխանություն և ուժեղ առաջնորդ ունենալու ցանկությունը բխում է նշանակալից անհանգստությունից և դրանից ազատվելու ցանկությունից: Մարդիկ փնտրում են այնպիսի առաջնորդի, ով կասի իրենց՝ ինչ անել, ինչպես ապրել: Հետաքրքիր է, որ այսօր էլ նույնիսկ ժողովրդավարության չափորոշիչ համարվող ԱՄՆ-ում շատ ամերիկացիներ գնահատում են իրենց նախագահին ըստ այն բանի, թե ինչքան ուժեղ ու ագրեսիվ է նա (ինչն իր հերթին վկայում է ամերիկյան հասարակության տագնապայնության բարձր աստիճանի մասին): Բայց ինչպես ցույց է տալիս պատ-

---

[16] Տե՛ս **Maria S. Kopp**, Anxiety, Freedom and Democracy. // Behavioural and Cognitive Psychotherapy,Volume 18, Issue 3, 1990, էջ 189:

[17] **Մեյ Ր.**, նշվ. աշխ., էջ 20:

մությունը, այսպես կոչված ուժեղ առաջնորդները նաև մեծ վտանգներ են առաջացրել համայն մարդկության համար: Մինչդեռ, եթե առաջնորդվենք ժամանակակից ժողովրդավարության տրամաբանությամբ, հասարակության համար շատ ավելի նպատակահարմար կլիներ ողջամիտ և մրցակցող ուժերը խելամիտ հավասարակշռության մեջ պահել կարողացող առաջնորդներ փնտրելը: Այս առումով, ի հակակակշիռ տագնապի հաղթահարման «դիցաբանական» ձևերի (ուժեղ հերոս-առաջնորդը կլուծի բոլոր խնդիրները), հասարակական մասշտաբներում տագնապի ավելի կառուցողական հաղթահարման գործուն միջոցներից մեկը մարդկային հանրույթների «նորմալ» ձևերի զարգացումն է: «Հանրույթ» հասկացությունը տվյալ դեպքում ենթադրում է սոցիալական միջավայրում մարդկանց փոխհարաբերությունների դրական որակները: Այն մի փոքր այլ նրբերանգ ունի, քան ավելի չեզոք «հասարակություն» հասկացությունը: Հասարակության անդամ է յուրաքանչյուրը՝ անկախ իր կամքից և նրանից՝ կառուցո՞ւմ է, թե՞ ոչնչացնում: Հանրույթը ենթադրում է, որ մարդը ցանկանում է կառուցել իր փոխհարաբերությունները ուրիշների հետ և պատասխանատվություն է զգում դրա համար: Հանրույթը տնտեսական առումով ընդգծում է աշխատանքի սոցիալական նշանակությունը, իսկ հոգեբանական առումով՝ փոխըմբռնման և ստեղծագործական ներուժի բացահայտման վրա հիմնված հարաբերությունները: Հասարակական գործընթացներում ակտիվ մասնակցությունը և այն զգացումը, որ սեփական գործողությունները ունակ են փոխելու իրավիճակը, նվազեցնում են տագնապի զգացումը: Ինչևէ, սրան հասնելու համար հարկավոր է իմանալ, թե ինչ է վտանգը, և ինչպես կանխատեսել նրա հետևանքները: Ժամանակակից հասարակության տեղեկատվական մեծաքանակ հոսքերը այսօր հանգեցնում են այնպիսի հակառակ արդյունքի, որ մենք աստիճանաբար սկսում ենք ավելի քիչ տիրապետել մեր առկա իրավիճակին և հետագա ճակատագրին առնչվող համարժեք տեղեկատվության: Ամեն դեպքում ժողովրդավարական առաջնորդի համար կարևոր է այն փաստի ընդունումը, որ նա համակարգում է ազատ մարդկանց անկախ հանրույթը: Հակառակ պարագայում միշտ ավելի հեշտ լուծում է զանգվածներին տագնապների և վախերի վրա շեշտադրում կատարելով կառավարելը: Մեծ գայթակղություն է հասարակական տագնապները ցանկալի փոփոխություն իրականացնելու համար օգտագործելը, քանի որ այսօր էլ նվաճած կայունությունը կորցնելու վտանգը կարող է օգտագործվել որպես ամենախոր անհանգստության աղբյուր՝ հասարակությանը մանիպուլյացիայի ենթարկելու համար: Ուստիև միայն իրական առաջնորդներն են ունակ զերծ մնալու այս գայթակղությունից և չօգտագործել տագնապի մեծացման տեխնոլոգիաները ժողովրդավարության և ազատության կարգախոսների ներքո:

Բանալի բառեր – *տագնապ, վախ, օտարում, միայնություն, հաջողություն, սոցիալական մրցակցություն, անհատակենտրոն հասարակություն, ավտորիտարիզմ, ժողովրդավարություն*

АРМАН КАРАГУЛЯН – *Тревога как симптом современного социокультурного кризиса*. – Тревога рассматривается в статье как социокультурный феномен и следствие образа жизни современного человека. Современное индивидуализированное общество со своими парадигмами «социальной конкуренции» и «удачи» становится сильнейшим источником одиночества, отчуждённости и тревог. Общецивилизационная проблема тревог в современных постсоветских обществах в силу их экономических, политических и духовных особенностей приобретает новые грани, негативно влияя на самосознание людей и процессы демократизации.

Ключевые слова: *тревога, страх, отчуждение, одиночество, удача, социальная конкуренция, индивидуализированное общество, авторитаризм, демократия*

ARMAN GHARAGULYAN – ***Anxiety as a Syndrome of Modern Social-Cultural Crisis***. – The article examines anxiety as a socio-cultural phenomenon and a consequence of modern lifestyle. The modern individualized society with its paradigms of “social competition” and “luck” is the strongest source of loneliness, alienation, and anxiety. The general civilization problem of anxiety in modern post-Soviet societies, due to its economic, political and spiritual characteristics, acquires new facets, adversely affecting people’s self-awareness and the processes of democratization of society.

Key words: *anxiety, fear, alienation, loneliness, luck, social competition, individualized society, authoritarianism, democracy*